առողջացած չպէտք է համարել այն դրու-թիւնը, երբ կակազը ամեն րոպէ դեռ մտա-ծում է կակազութեան համար ծրագրած մի որոշ շարք կանոնների մասին։ Տանջանքը թե-թևացած և ոչ կատարելապէս վերացած պէտք է համարել, եթէ կակազը դեռ կատա-րելապէս բնական կերպով չի կարող խօսել, որովհետև այդպիսիների մէջ հեշտութեամբ կարող է նորից կակազումն յառաջ գալ։

Ուսումնարաններում կակազութեան դէմ կռուելու մէջ մեծ յաջողութիւն ունենալու համար, հեղինակը առաջարկում է հետևեալ միջոցը՝ աշակերտին դասարանից դասարան փոխադրելիս ուսուցիչը պէտք է ներկայացնէ դպրոցի տեսչին և հետևեալ դասարանի ու-սուցչին երեխաների այդ թերութեան կատա-րեալ և կամ ոչ կատարելապէս բժշկելու մա-սին մի գրաւոր զեկուցում։ Այդպիսի աշա-կերտների մասին ուսուցչի կազմած տեղեկա-գրերը զեկուցանում է իւրաքանչիւր ամիս տեղի ունեցող ժողովին։ Ցանկալի կը լինէր, որ ուսուցիչը, որքան կարելի է, յաճախակի ուշք դարձնէր կակազ աշակերտների այդ պա-կասութեան վերայ և աշխատէր զանազան միջոցներով վերացնել այդ։ Սոյնանման տարե-կան զեկուցումները կարող կը լինէին պարզել այդ մութ կէտը։ Մանուկներին կակազու-թիւնից բժշկելը դպրոցական վարչութեանց գործն է. խօսակցութեան մէջ թերութիւն-ներով տանջուող աշակերտների հետ ունեցած ներբազգաց, քաղցր և մարդասէր վարմունքնե-րով, բարեխիղճ և լուրջ աշխատութիւն-ներով ուսուցիչը կարող կը լինի վերացնել, բժշկել յիշեալ թերութիւնը, որով մեծ զարկ տուած կը լինի դպրոցական ընդհանուր յա-ռաջադիմութեան գործին։

Գ. Ղ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

Մի անուանի պաստոր հանքային ջրեր էր գնա-ցել. Առաջին օրն իսկ ճաշին նա կարողացաւ իւր կենդանի խօսքերով սեղան նստած բազմամարդ հա-սարակութեան ուշքը դէպի իրեն գրաւել. Բոլոր խօսակցութիւնները, հետզհետէ լռեցին. կարծես ա-մենքը կախարդուել լսողութիւն էին դարձել և լարուած ուշադրութեամբ ականջ էին դնում այդ հրաշախօս օտարականին. բազմականներից միայն մէկը չէր լսում, նա պաստորի համաքաղաքացին էր և ուրեմն պիտ դժուարանար պատիւ անել իւր գաւառի մարգարէին, լինելով մանաւանդ մէկն այն զարգացածներից, որոնց հայեացքով ս. Գիրք և [illegible] անտեղի բաներ են մեր լուսաւորեալ դարի համար. Մեծ զայրոյթով նկատում էր նա, թէ ինչպէս այդ ճգնաւորը առիւծի բաժին էր վայելում խօսակցու-թեան մէջ և ինքն ամենեւին միջոց չէր գտնում իւր լուսաւոր մտքերը հրապարակ հանել. Վերջա-պէս նա չկարողացաւ այլևս համբերել և դառնա-լով յանկարծ սեղանակիրներին կանչեց. «Պարո-նայք, զգուշացնում եմ ձեզ ամեն կերպ այդ պա-րոնից. ես նորան լաւ եմ ճանաչում. դա մի գայլ է ոչխարի մորթով»։ Բոլորը բարկացած շուռ եկան. միայն պաստորը մնաց բոլորովին հանգիստ և ասաց խաղաղ ձայնով. «Պարոնայք, ես իմ կողմից պատ-ճառ չունիմ այդ պարոնից զգուշացնելու, ես ևս դորան շատ լաւ եմ ճանաչում. դա մի ոչխար է գայլի մորթով»։ Բարձրաձայն քրքիջը փակցրեց ախո-յեանի ախորժակը վէճը շարունակելու.

*
* *

Մի հետաքրքիր տեղեկութիւն շան սիրողներին. — Շատ և շատ անգամ առիթ է եղել հրապարակօրէն յայտնելու շների լորձունքից յառաջացած վտանգի մասին. Այժմս նորից կրկնում ենք, որ չպէտք է թոյլ տալ թէ փոքր երեխաներին և թէ հասակա-ւորներին համբուրել շներին, նոյնքան վտան-գաւոր է և շների լիզելը, որովհետև, ստիպուած ենք կրկնել, դորանից յառաջացած վնասները մեծ են և ապագայում կունենան տխուր հետևանք-ներ. Անհրաժեշտ եմ համարում յիշել այստեղ „D. Stein et Weisen“ լրագրի հաղորդած մի տխուր դէպք, որ յառաջացել է լորձունքից. Մօտ ժամա-նակներումս Գալլիա քաղաքում տարօրինակ հի-ւանդութիւնից մեռաւ մի հարուստ վաճառական. պարազիտները, այդ անտեսանելի մաշող էակները, որ միայն շան ներքին գործարաններում կարող են ապրել, քայքայել էին նորա ներքին գործարանն-երը. Անդամահատութեան ժամանակ մի լեարդից 100-ից աւելի պարազիտներ են հանուած. Լեարդի և թոքերի միջև արդէն խոց էր գոյացել, որից և հիւանդը մեռաւ. Այս դժբախտութիւնը յառաջա-ցել է նորանից, որ վաճառականը թոյլ էր տալիս իւր շանը լիզելու տիրոջը. Շան լորձունքի հետ միասին այդ մանրիկ որդերը անց են կենում մար-դու մէջ, որտեղ նոքա բազմանում են շատ արագ և կարող են խիստ վտանգաւոր և մինչև անգամ կործանարար հետևանքներ ունենալ, ինչպէս վե-րոյիշեալ դէպքում.

*
* *

800 ասեղ մարմնի մէջ. — Ռենտգենի ճառագայթ-ների օգնութեամբ մօտ ժամանակներս Նիւ—Եօր-կում վերին աստիճանի հետաքրքիր մի անդամա-զննական փորձ է կատարուած. Նիւ—Եօրկում ապրում է Մելինա Մօրփորտ անունով խիստ տա-րօրինակ մի 21 տարեկան օրիորդ, որը երկար ժա-մանակ է տանջւում ասեղներ կուլ տալու և կամ մարմնի մէջ խրելու անբժշկելի մոլութեամբ. Սոյ-նանման մոլութիւններ շատ և շատ անգամ են պա-

տահել այլ և այլ երկիրներում, որոնց մասին վկայել կարող են Խիրուրգ վիրաբոյժները և խելագարների բժիշկները։

Մելվինա Մորֆօրտի դեպքը նշանաւոր, աւելի հետաքրքիր և ուշադրութեան արժանի է նրանով, որ օրիորդը հարիւր անգամից աւելի ենթարկուել է տանջող, ծանր անդամահատութեան։

Այդքան դժուար փորձերից յետոյ բժիշկները դուրս են բերել նրա մարմնից մօտաւորապէս 800 ասեղներ։ Աղջիկը չի խոստովանում այդ, մընում է մեզ ենթադրել, որ նա իւր մոլութեանը բաւականութիւն է տուել հոգեկան խանգարման բոպէներին, որից յետոյ խաղաղ միջոցին աղջիկը ոչինչ յիշելիս չէ եղել։ Արդէն հաստատապէս ապացուցուել է, որ ասեղները մարմնի մէջ թափառում են և անասելի ցաւեր պատճառում։ Դօկտօր Բուրգօն Բենդէնի ճառագայթների շնորհիւ վերոյիշեալ աղջկայ աջ ձեռքը ընդօրինակեց և գտաւ մօտ 30 բարակ փոքրիկ գծեր, որտեղ տեղաւորուած են եղել ասեղները։ Շնորհիւ այս վերջին փորձի, յաջողուեց դուրս հանել նորից 9 ասեղ, բայց արդէն պէտք է առանձին ուշք դարձնել դադարեցնելու անդամահատութիւնն, որովհետև կը յառաջանայ արեան սաստիկ կորուստ, ապա և ցաւալի հետևանքներ։ Ենթադրում են, որ ապագայում դարձեալ ստիպուած պէտք է լինին կրկնել այդ չարատանջ անդամահատութիւնը։ Դժբաղդ աղջիկ այժմ ապրում է իւր մօր մօտ, որն և անքուն աչքով և մեծ խնամքով հսկում է իւր տարաբաղդ և թշուառ աղջկանը։ Դժուար է երևակայել, թէ արդեօք ի՞նչպէս և ո՞րտեղից է նա ձեռք բերում իւր կեանքը թոյնաւորող այդ ասեղները։

*
* *

Թղթից պատրաստած տներ.—Ամերիկացիների հնարագիտութեանը չափ և սահման չկայ։ Նոքա այժմ թղթէ տներ են շինում։ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներից մէկում—Վիսկոնսինում գոյութիւն ունի մի ահագին գործարան, որտեղ պատրաստուում է և հաստ 2—3 մետր երկայնութիւն ունեցող սալի նման այսպէս անուանուած «թղթէ ադիւներ»։ Շինութեան համար հնարած այս նոր նիւթերը մեծ առաւելութիւններ ունին քարից, նախ և առաջ թուղթը տաքութիւն վատ հաղորդող մարմինների կարգին է պատկանում, քան ադիւսը կամ քարը, ուստի և թղթից կառուցած տները ձմեռը տաք են լինում։ Իսկ ամառը զով։ Շինութեան ժամանակ թղթից պատրաստած ադիւսներին քսում են ճարպային նիւթ, որպէսզի խոնաւութիւնից ազատ լինի։ Բացի դրանից այդ թղթեայ ադիւսները մի լաւ թրջում են աղաջրով և զանազան նիւթերով (антисентическими веществами), որով և թուղթն ապահովուում է այրուելուց և անմատչելի է դառնում միջատների և զանազան միկրօբների համար։

Այս բոլորից մենք կարող ենք եզրակացնել այն, որ այսպիսի նիւթերից պատրաստուած տներն ամենայարմարն իդէալականն պէտք է համարել, ինչպէս առողջապահական, նոյնպէս և հրդեհներից ապահով լինելու տեսակէտից։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՀԱՅԻ ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ՈԳԻՆ.

Մեր պատմական կեանքի մէջ եղել են շատ ծանր վայրկեաններ. չպիտի վարանինք ասելու, որ նոյն իսկ Հայոց դարաւոր կեանքը ծանր վայրկեանների մի անընդհատ շարք է. ո՞վ այս գիտէ, ո՞վ այս դաղափարը լրջօրէն ըմբռնել կարող է, նորա համար ակնյայտնի պէտք է լինի թէ ի՞նչ է պահանջուում մեր եկեղեցու ամէն մէկ անդամից, մեզանից պահանջուում է միշտ խոնարհել Ցիրոջ ամենաբարի կամքի առաջ և միշտ գոհ լինել նորա ամենառատ պարգևներից. այսպէս է ուսուցանում մեզ մեր պատմութիւնը. այսպէս է հրահանգում մեզ մեր դարաւոր փորձը. այսպէս է վիճակուած մեզ Նախախնամութիւնից ոչ այսօր, այլ միշտ։

Պարզենք այս միտքը պատմական փաստերով, թողնե՞նք հին անցեալը, որ շատերի երևակայութեան մէջ պատկերանում է իբրև ոսկի օրերի մի շրջան. թողնե՞նք նաև Արաբացւոց արշաւանքի և տիրապետութեան ժամանակները, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ անգութ գործերի և յուսահատեցուցիչ ոճիրների մի անտանելի տեսարան։ Մտաբերե՞նք այն, ինչ որ մեր ժամանակներին աւելի մօտիկ է։ Յիշե՞նք, օրինակ, Սելջուքների արշաւանքի օրերն, երբ հոյակապ շէներ ու աւաններ, քաղաքներ ու բերդեր հողի մոխրի հաւասարուեցան, երբ մեծափարթամ թագաւորութիւններն և նախարարական տոհմերը շատ կարճ ժամանակի մէջ ոչընչացան, երբ մեր փառազարդ բազմամարդ վանքերն ու եկեղեցիներն անշքացան։ Գիտե՞ք ինչ հարուած, ի՞նչ երկնային պատուհաս էր այդ. ի՞նչ անտանելի պատմական վայրկեան էր.